22 հուլիսի 2010 թվականի N 926 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2328-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (Հայկական ատոմային էլեկտրակայանի արտաքին վթարային պլան) հաստատելու մասինե N 2328-Ն որոշման 5-րդ կետում «առևտրի և տնտեսական զարգացմանե բառերը փոխարինել «էկոնոմիկայիե բառով։

2. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի `

1) 3-րդ կետի 1-ին ենթակետում`

ա. «աե պարբերությունում «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունե բառերը փոխարինել « Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունե բառերով,

բ. «զե պարբերությունում «առևտրի և տնտեսական զարգացմանե բառերը փոխարինել «էկոնոմիկայիե բառով,

գ. «էե պարբերությունը «էներգետիկայիե բառից հետո լրացնել «և բնական պաշարներիե բառերով,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` «ժգ.1.ե պարբերությամբ.

«ժգ.1.Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունե,

ե. «ժզե պարբերությունում «մաքսային պետականե բառերը փոխարինել «պետական եկամուտներիե բառերով,

զ. ուժը կորցրած ճանաչել «ժզե և «իզե պարբերությունները.

2) 3-րդ կետի 2-րդ ենթակետում՝

ա. «իէե պարբերությունում «Սամաղարիե բառը փոխարինել «Գեղակերտիե բառով,

բ. «լբե պարբերությունում «Հոկտեմբերիե բառը փոխարինել «Սարդարապատիե բառով.

3) 3-րդ կետի 3-րդ ենթակետում՝

ա. «եե պարբերությունում «ԱրմենՏելե փակ բաժնետիրական ընկերությունե բառերը փոխարինել «ԱրմենԹելե փակ բաժնետիրական ընկերությունե բառերով,

բ. «զե պարբերությունում «ԱրմենՏելե փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի մարզային կապի հանգույցե բառերը փոխարինել «ԱրմենԹելե փակ բաժնետիրական ընկերության Կենտրոնական տարածքային կենտրոնի Էջմիածին-Արմավիր-Բաղրամյան ուղղությունե բառերով,

գ. «էե պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«է) Հարավ-Կովկասյան երկաթուղիներե փակ բաժնետիրական ընկերության «Արմավիրի կայարանե.

4) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9.1-ին, 20.1-ին, 22.1-ին և 22.2-րդ ենթակետերով.

«9.1) «Հրդեհային անվտանգության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքե.

«20.1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմե պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասինե N 531-Ն որոշումե.

«22.1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասինե N 1219-Ն որոշումե.

«22.2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի «Ճառագայթային անվտանգության կանոնները հաստատելու մասինե N 1489-Ն որոշումե.

5) 5-րդ կետում՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության գործողությունների պլանը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին ենթակետով.

«13.1) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության գործելու և անձնակազմի պաշտպանության պլանը,

գ. 14-րդ ենթակետում «մաքսային պետականե բառերը փոխարինել «պետական եկամուտներիե բառերով,

դ. 16-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում պետական ռեզերվների կարգավորման պլանը,

ե. 23-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում հակահիդրեհային ապահովման պլանը,

զ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 23.1-ին և 23.2-րդ ենթակետերով.

«23.1)ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում օդերևութաբանական ապահովման պլանը.

23.2) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության գործողությունների և անձնակազմի պաշտպանության պլանը.

6) 7-րդ կետում `

ա. 2-րդ ենթակետից հանել «Հայաստանի փրկարար ծառայությունե բառերը,

բ. 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ա.1.ե պարբերությամբ.

«ա.1. ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պլանը գործողության մեջ դնելը,

գ. 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե.1.ե, «ե.2. ե, «ե.3.ե, «ե.4.ե, «ե.5.ե և «ե.6.ե պարբերություններով.

«ե.1. համապատասխան ոլորտները համակարգող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համատեղ պետական պահուստում պահպանման ենթակա նյութական արժեքների անվանացանկի, ինչպես նաև դրանց կուտակման նորմաների մշակման ու փոփոխման ուղղությամբ աշխատանքների իրականացումը և նշված անվանացանկը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը.

ե.2. համապատասխան ոլորտները համակարգող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համատեղ պատասխանատու պահպանումն իրականացնող կազմակերպությունների ցանկի մշակման ու փոփոխման ուղղությամբ աշխատանքների իրականացումը՝ այդ ցանկը Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը.

ե.3. պետական պահուստի նյութական արժեքների կուտակման, ապաամրագրման, թարմացման և փոխարինման հեռանկարային ու տարեկան ծրագրերի նախագծերը

սահմանված կարգով մշակելը և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել.

ե.4. պատասխանատու պահպանում իրականացնող կազմակերպություններում և պետական ռեզերվների գործակալության համակարգի կազմակերպություններում ու պետական պահուստի նյութական արժեքների կուտակման, բացթողման, վերադարձման, թարմացման, փոխարինման, տարածքային տեղաբաշխման սահմանված ծրագրերի և առաջադրանքների կատարման նկատմամբ հսկողության իրականացումը.

ե.5. փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանների մասին տեղեկատվության տրամադրումը.

ե.6. ՀԱԷԿ-ի շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտում գամմա ճառագայթման հզորության, իսկ ազդակիր տարածքներում՝ նաև տեղանքի արտաքին ռադիոակտիվ աղտոտվածության մոնիթորինգի իրականացումը և տեղեկատվության տրամադրումը,

դ. 3-րդ ենթակետի «գե պարբերությունում «Հայաստանի փրարար ծառայությանը բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը բառերով,

ե. 5-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝«դ.1.ե պարբերությամբ.

«դ.1. սննդամթերքի որակի և պիտանիության նկատմամբ հսկողության իրականացումե,

զ. 8-րդ ենթակետը «էներգետիկայիե բառից հետո լրացնել «և բնական պաշարներիե բառերով,

է. 9-րդ ենթակետի «աե պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. մասնակցությունը տարահանված բնակչության կենսապահովմանը,

ը. 11-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ.1.ե պարբերությամբ.

«դ.1. աղտոտված գոտիներում հայտնված զորամասերի անձնակազմի պաշտպանության կազմակերպումը,

թ. 12-րդ ենթակետում «առևտրի և տնտեսական զարգացմանե բառերը փոխարինել «էկոնոմիկայիե բառով,

ժ. 12-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «դ.1.ե, «դ.2.ե և «դ.3.ե պարբերություններով.

«դ.1. սննդի և սննդամթերքի մատակարարման շարժական կետերի միջոցով տուժած բնակչությանը սննդով ապահովումը.

դ.2. հնարավոր աղտոտված գոտում վտանգավոր կազմակերպությունների անվտանգ շահագործման և անձնակազմի պաշտպանության կազմակերպումը.

դ.3. գործունեությունը դադարեցնող և չդադարեցնող կազմակերպությունների ցուցակի ներկայացում, գործունեությունը շարունակող կազմակերպությունների անձնակազմի պաշտպանության կազմակերպումե,

ժա. 12-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին ենթակետով.

«12.1) Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կողմից իրականաց-վող գործառույթներն են՝

ա. սփյուռքի օգնությամբ հումանիտար օգնության հայթայթումը, վերականգնողական բուժման կազմակերպումն արտերկրում.

բ. վթարային աղտոտված գոտում գտնվող սփյուռքահայերի հաշվառումը.

գ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովմանը.

դ. նախարարության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմերի պաշտպանու-թյան կազմակերպումըե,

ժբ. ուժը կորցրած ճանաչել 13-րդ ենթակետը,

ժգ. 16-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ.1.ե պարբերությամբ.

«զ.1. տարահանվող բնակչության համար նախատեսված սննդամթերքի և առաջին

անհրաժեշտության ապրանքների բաշխման կետերի ու պահեստների պահպանության իրականացումը,

ժդ. 17-րդ ենթակետում «մաքսային պետականե բառերը փոխարինել «պետական եկամուտներիե բառերով,

ժե. ուժը կորցրած ճանաչել 25-րդ ենթակետը.

7) 17-րդ կետի «(ՀՓԾ-ի ուժերով ծավալվում են համակարգման կետեր)ե բառերը փոխարինել «(ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության ուժերով (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ) ծավալվում են համակարգման կետեր)ե բառերով.

8) 22-րդ կետը «ՀՀ էներգետիկայիե բառերից հետո լրացնել «և բնական պաշարներիե բառերով.

9) 26-րդ կետում՝

ա. 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) հակահրդեհային գործողությունների ապահովման համար՝ ՀՀ ԱԻՆ ՀՓԾ տարածքային ստորաբաժանումների հրշեջ-փրկարարական ջոկատներից 2 համահավաք հակահրդեհային հենակետեր (առնվազն 60 մարդ)՝ 10 միավոր ԱԲ-40 տեխնիկայով,

բ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովման համար՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը՝ տարահանման գործում ներգրավում է առնվազն 699 միկրոավտոբուս և 30 երկաթուղային մարդատար վագոն (նախատեսվում են տրանսպորտային միջոցներ՝ իրավիճակի կտրուկ փոփոխման դեպքում լրացուցիչ տարահանում իրականացնելու համար)ե.

10) 31-րդ կետում «առևտրի և տնտեսական զարգացմանե բառերը փոխարինել «էկոնոմիկայիե բառով.

11) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 35.1-ին կետով.

«35.1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանն սույն պլանի 7-րդ կետի 12-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված գործառույթի իրականացմանն աջակցում են Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը ու Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը».

12) 36-րդ կետը «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե» բառերից հետո լրացնել «ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունն» բառերով.

13) 40-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Գործի մեջ են դնում սույն պլանի I գլխի 5-րդ կետով նախատեսված իրենց գործողությունների պլանները».

14) 42-րդ կետում «65-րդ, 66-րդ, 67-րդ, 69-րդ և 70-րդ կետերում» բառերը փոխարինել «40-րդ կետում» բառերով.

15) 44-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«44. ՇՊՄՊ գոտում բնակչության ազդարարումն իրականացվում է ՀՓԾ Արմավիրի և Արագածոտնի մարզային փրկարարական վարչությունների օպերատիվ հերթապահների և ՀՀ ԱԻՆ ՀՓԾ ճգնաժամային կառավարման կենտրոնից «Ճառագայթային վտանգ» ազդանշանը հնչեցնելու միջոցով».

16) 66-րդ կետում «27» թիվը փոխարինել «26» թվով, իսկ «8» թիվը՝ «7» թվով.

17) 68-րդ կետը «տարահանման» բառից հետո լրացնել «միջանկյալ» բառով.

18) 81-րդ և 83-րդ կետերը «Արմավիրի» բառից հետո լրացնել «և Արագածոտնի» բառերով, իսկ «մարզի» բառը փոխարինել «մարզերի» բառով.

19) 85-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«85. Վթարի ժամանակ, օպերատիվ իրավիճակի փոփոխման դեպքում, ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատը տեղակայման վայրից տեղափոխվում է փրկարար ուժերի ղեկավարի որոշմամբ.

20) 94-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին ենթակետով.

«2.1) ՆՊՄԻ-ի և ՇՊՄՊ-ի գոտիների մոնիթորինգի երթուղիները որոշվում են ելնելով ստեղծված իրավիճակից.

21) 105-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«105. Տարահանումն սկսելուց առաջ Հայաստանի Հանրապետության Արմավիրի և Արագածոտնի մարզերի կոմունալ-տեխնիկական ծառայությունները մասնակցում են տարահանման միջանկյալ հավաքակայաններում սանիտարական մշակման և տեխնիկայի ապաակտիվացման կետերի ստեղծմանը և այդ կետերում իրականացվող միջոցառումներինե.

3. Որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետով հաստատված N 8 հավելվածում «E-mail:emainter@arminco.comե բառերը փոխարինել «E-mail: emainter@ema.amե բառերով:

4. Որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետով հաստատված N 10 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

5. Որոշման 1-ին կետի 15-րդ ենթակետով հաստատված N 15 հավելվածում «908/50000ե թվերը փոխել «308/5000ե թվերով:

6. Որոշման 1-ին կետի 16-րդ ենթակետով հաստատված N 16 հավելվածի աղյուսակի 1-ին կետի 6-րդ սյունակի 3-րդ տողում «Արագածոտնիե բառը փոխարինել «Արմավիրիե բառով, իսկ 6-րդ կետի 6-րդ սյունակի «Հոկտեմբերե բառը՝ «Սարդարապատե բառով:

7. Որոշման 1-ին կետի 18-րդ ենթակետով հաստատված N 18 հավելվածի աղյուսակի 1.15-րդ կետի 3-րդ սյունակում «Արագածոտնիե բառը փոխարինել «Արմավիրիե բառով:

8. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետում նշված մարմինների ղեկավարներին՝ եռամսյա ժամկետում համապատասխան պլաններում կատարել սույն որոշումից բխող փոփոխություններ:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հուլիսի
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 22 -ի N 926 -Ն որոշման
§Հավելված N 10
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 22-ի N 2328 -Ն որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



10_0926

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ